«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ն ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/8-3»

ք. Կապան «26» փետրվար 2021 թ.

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վիոլա»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Մեժլումյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2575040 (երկու միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Կապան, Մ. Ստեփանյան 13	ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 00801026
Տնօրեն Կարեն Մելքոնյան	Տնօրեն՝ Ա.Մեժլումյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 26 » փետրվար 2021 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/8-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցեն*	ենթակա *քանակը	ժամկետը***
6	33211110/1	Մեզի քննության թեստեր 10 պարամետրի	VioLine 10 DFI Co. Ltd Հարավային Կորեա	Մեզի քննության թեստեր 10 պարամետրի,ֆորմատը՝100, ստուգվող նմուշ՝ մեզ, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, հավաք	հատ	49.2	29520	600	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում:
7	33211120/1	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու	GLUCOSE REAGENT SET Lab-Care Diagnostics Ltd Հնդկաստան	Գլյուկոզայի որոշման համար նախատեսված հավաքածու GLUCOSE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ:Չափման միավորը՝ թեսթ: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 2x100թեստ Գլյուկոզայի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	11.16	11160	1000			
9	33211140/1	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր – ուղիղ բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու	Total Direct Bilrubin Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր — ուղիղ բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, որակի սերտիֆիկատի առկայություն, թեստ	հատ	31.2	9360	300			
10	33211150/1	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ	Urea Berthelot Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ	հատ	29.4	5880	200			

16	33211230/1	Սիֆիլիսի որոշման թեսթ- հավաքածու	RPR REAGENT SET Lab-Care Diagnostics Ltd Հնդկաստան	Սի[illegible]սի որոշման թեստ հավաքածու (Syphilis RPR): Մեթոդ ազլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածույում թեստերի քանակը100թեստ:Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Չափման միավորը՝ թեսթ : Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8 ՝C	հատ	45.6	250800	5500			
21	33211310/1	Ակտիվ մասնակի թրոմբոպլաստինային ժամանակ	Activated Partial Thrombopla stin Time (APTT) Kit TAIZHOU STEELLEX BIOTECH CO., LTD Չինաստան	Ակտիվ մասնակի թրոմբոպլաստինային ժամանակ-պրոտրոմբինային ինդեքսի որոշման թեսթ, ստուգվող նմուշը՝ արյան շիճուկ, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, որակի սերտիֆիկատի առկայություն, թեստ	հատ	56.4	56400	1000			
22	33211310/2	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու TG	РЕНАМПЛА СТИН Renam Ռուսաստանի Դաշնություն	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու TG՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 100թեստ : Թրոմբոպլաստինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	46.8	374400	8000			
23	33211320/1	Հեպատիտ B որոշման թեստ	Accu-Tell RAPID HBSAG TEST Cassette AccuBioTech Co., LTD Չինաստան	Հեպատիտ B որոշման թեսթ; Մեթոդը՝ կասետային; Ֆորմատը՝ 30-100; Ստուգվող նմուշ՝ արյուն; Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-30 ՝C , թեստ	հատ	134.4	241920	1800			
24	33211330/1	PSA Պրոստատ սպեցիֆիկ հակագենի քանակական որոշման թեստ-հավաքածու	ДС-ИФАПСАобщий ООО «НПО 'Диагностич еские системы' Ռուսաստանի Դաշնություն	PSA Պրոստատ սպեցիֆիկ հակագենի քանակական որոշման թեստ-հավաքածու, մեթոդը՝ իմունոֆերմենտային, տուգվող նմուշը՝ արյան շիճուկ, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, որակի սերտիֆիկատի առկայություն, թեստ	հատ	193.75	74400	384			

26	33211350/1	Թիրեոթրոպ հորման TTG	ДС-ИФАТИРОИДТТГ ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	Թիրեոթրոպ հորման 12*8 TTG՝վահանաձև գեղձի հորմոնի որոշման հավաքածու,մեթոդը՝ իմունոխրոմատոգրաֆիկ,ֆորմատը՝12*8, ստուգվող նմուշ արյան շիճուկ, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, թեստ	հատ	193.75	55800	288			
27	33211370/1	Թիրոքսին ազատ T4	ДС-ИФАТироидТ4свободный ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	Թիրոքսին ազատ T4-Վահանաձև գեղձի հորմոնի որոշման հավաքածու, մեթոդը՝ իմունոխրոմատոգրաֆիկ, ստուգվող նմուշը՝ արյուն, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, որակի սերտիֆիկատի առկայություն	հատ	193.75	93000	480			
31	33211430/1	Ալֆա ամիլազաի որոշման համար նախատեսված հավաքածու	AMILASE Direct PZ Cormay S.A. Լեհաստան	Ալֆա ամիլազաի որոշման համար նախատեսված հավաքածու AMYLASE՝ նախատեսված բաց համակարգի համար: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ՝ 60թեստ : Ալֆա ամիլազաի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	362.4	18120	50			
32	33211460/1	Ֆիբրինոգենի որոշման թեսթ-հավաքածու	Fibrinogen Determination (FIB) Liquid Kit TAIZHOU STEELLEX BIOTECH CO., LTD Չինաստան	Ֆիբրինոգենի որոշման թեսթ-հավաքածու:Մեթոդը՝ֆիբրինոգոյացման ժամանակի որոշում,ստուգվող նմուշ՝ արյա պլազմա, , հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, որակի սերտիֆիկատի առկայություն, թեստ	հատ	87.6	700800	8000			
33	33211470/1	Տրոպանինի որոշման թեսթ	TROPONIN I Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	Տրոպանինի որոշման թեսթ-հավաքածու, մեթոդը՝ իմունոխրոմոտոֆիլային, չափման միավորը՝ թեսթ, ստուգվող նմուշ արյան շիճուկ, հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն	հատ	708	28320	40			
35	33211500/1	Պարաթիրեոիդ հորմոն	PTH DiaMetra Srl Իտալիա	Պարաթիրեոիդ հորմոն՝հարվահանագեղձի հորմոնի որոշման հավաքածու, մեթոդը՝ իմունոֆերմենտային, ֆորմատը՝ 12*8; չափման միավորը՝ թեսթ, ստուգվող նմուշը՝ արյուն:Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8 ՝C	հատ	1825	175200	96			
79	33211500/5	Տպիչի թուղթ 60 մմ	ООО "БалтПапир"ООО "БалтПапир Ռուսաստանի Դաշնություն	Տպիչի թուղթ 60 մմ; հատ, պահել չոր տեղում: Որակի սերտիֆիկատի առկայություն:Ֆիրմային նշանի առկայություն:	հատ	580	11600	20			

93	33691162/14	TP-ab վահանագեղձի հակամարմին	ДС-ИФАТИРОИДАНТИ-ТПО ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	Վահանձև գեղձի հակամարմնի հորմոնի որոշման հավաքածու; մեթոդը՝ իմունոխրոմատոգրաֆիկ; ֆորմատը՝ 96; ստուգվող նմուշը՝ մեզ; հանձնելու պահին պրտանելիության ժամկետի 2/3 առկայություն; Ֆիրմայնի նշանի առկայությունը	հատ	206.25	39600	192			
94	33691162/15	Խլամիդիա IgM	ДС-ИФААНТИХЛАМИДИ ß TR-G ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	Խլամիդիայի քանակական որոշման հավաքածու:Մեթոդը՝ Իմունոֆերմենտային: Ֆորմատը՝ 96:Ստուգվող նմուշը՝ արյան շիճուկ:Հանձնելու պահին պրտանելիության ժամկետի 2/3 առկայություն:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝2-8՝ C:Սերտիֆիկատ ISO 13485	հատ	243.75	23400	96			
95	33691162/16	պրոլակտին PRL	ДС-ИФАПролактин ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	պրոլակտինի PRL քանակական որոշման թեստ: Մեթոդը՝ իմունոֆերմենտային: Ստուգվող նմուշ՝արյան շիճուկ/պլազմա: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	205	19680	96			
96	33691162/17	LH լյուտեինացնող հորմոն	ДС-ИФАГонадотропин-ЛГ ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	Լյուտեինացնող հորմոն LH 12*8	հատ	211.25	20280	96			
97	33691162/18	FSH ֆոլիկուլ խթանող հորմոն	ДС-ИФАГОнадотропин-ФСГ ООО «НПО 'Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	FSH ֆոլիկուլ խթանող հորմոն	հատ	211.25	20280	96			
99	33691162/2	Մեզի քննության թեստեր 2 պարամետրի	Chemistrix KG Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	Մեզի քննության թեստեր 2 պարամետրի՝շաքարի և ացետոնի որոշման թեստ-հավաքածու, ստուգվող նմուշ՝ մեզ: հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն, ֆիրմային նշանի առկայություն, որակի սերտիֆիկատի առկայություն	հատ	22.8	57000	2500			
100	33691162/20	Տեստոստերոնի քանակական որոշման տեստ հավաքածու	ДС-ИФАСтероидТестостер он ООО «НПО ' Диагностические системы' Ռուսաստանի Դաշնություն	Տեստոստերոնի քանակական որոշման թեստ-հավաքածու	հատ	196.25	18840	96			
101	33691162/21	էստրիոլ	ESTRADIOL ELISA DiaMetra Srl Իտալիա	էստրիոլի որոշման թեստ-հավաքածու: Մեթոդը՝ իմունոֆերմենտային: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	667.5	64080	96			

103	33691162/23	պարատ PTH հորմոն	Intact PTH ELISA DiaMetra Srl Իտալիա	պարատ PTH հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու: Չափման միավորը՝ թեսթ : Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8 °C	հատ	1825	175200	96			

*Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:

**Ծանոթություն

*Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

* Որակի սերտիֆիկատների առկայություն

*Ծանոթություն – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Այունիքի մարզ, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Կապան, Մ. Ստեփանյան 13
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ Կարեն Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա.Մեժլումյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«26» փետրվար 2021 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/8-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	33211110/1	Մեզի քննության թեստեր 10 պարամետրի		7380	7380	14760	14760	14760	22140	22140	22140	29520	29520	29520	29520
7	33211120/1	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու		2790	2790	5580	5580	5580	8370	8370	8370	11160	11160	11160	11160
9	33211140/1	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր – ուղիղ բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու		2340	2340	4680	4680	4680	7020	7020	7020	9360	9360	9360	9360
10	33211150/1	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ		1470	1470	2940	2940	2940	4410	4410	4410	5880	5880	5880	5880
16	33211230/1	Սիֆիլիսի որոշման թեսթ-հավաքածու		62700	62700	125400	125400	125400	188100	188100	188100	250800	250800	250800	250800
21	33211310/1	Ակտիվ մասնակի թրոմբոպլաստինային ժամանակ		14100	14100	28200	28200	28200	42300	42300	42300	56400	56400	56400	56400
22	33211310/2	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու TG		93600	93600	187200	187200	187200	280800	280800	280800	374400	374400	374400	374400
23	33211320/1	Հեպատիտ B որոշման թեստ		60480	60480	120960	120960	120960	181440	181440	181440	241920	241920	241920	241920
24	33211330/1	PSA Պրոստատ սպեցիֆիկ հակագենի քանակական որոշման թեստ-հավաքածու		18600	18600	37200	37200	37200	55800	55800	55800	74400	74400	74400	74400
26	33211350/1	Թիրեոթրոպ հորման TTG		13950	13950	27900	27900	27900	41850	41850	41850	55800	55800	55800	55800
27	33211370/1	Թիրոքսին ազատ T4		23250	23250	46500	46500	46500	69750	69750	69750	93000	93000	93000	93000
31	33211430/1	Ալֆա ամիլազայի որոշման համար նախատեսված հավաքածու		4530	4530	9060	9060	9060	13590	13590	13590	18120	18120	18120	18120
32	33211460/1	Ֆիբրինոգենի որոշման թեսթ-հավաքածու		175200	175200	350400	350400	350400	525600	525600	525600	700800	700800	700800	700800
33	33211470/1	Տրոպանինի որոշման թեսթ		7080	7080	14160	14160	14160	21240	21240	21240	28320	28320	28320	28320
35	33211500/1	Պարաթիրեոիդ հորմոն		43800	43800	87600	87600	87600	131400	131400	131400	175200	175200	175200	175200

79	33211500/5	Տպիչի թուղթ 60 մմ		2900	2900	5800	5800	5800	8700	8700	8700	11600	11600	11600	11600
93	33691162/14	TP-ab վահանագեղձի հակամարմին		9900	9900	19800	19800	19800	29700	29700	29700	39600	39600	39600	39600
94	33691162/15	Խլամիդիա IgM		5850	5850	11700	11700	11700	17550	17550	17550	23400	23400	23400	23400
95	33691162/16	պրոլակտին PRL		4920	4920	9840	9840	9840	14760	14760	14760	19680	19680	19680	19680
96	33691162/17	LH լյուտեինացնող հորմոն		5070	5070	10140	10140	10140	15210	15210	15210	20280	20280	20280	20280
97	33691162/18	FSH ֆոլիկուլ խթանող հորմոն		5070	5070	10140	10140	10140	15210	15210	15210	20280	20280	20280	20280
99	33691162/2	Մեզի քննության թեստեր 2 պարամետրի		14250	14250	28500	28500	28500	42750	42750	42750	57000	57000	57000	57000
100	33691162/20	Տեստոստերոնի քանակական որոշման տեստ հավաքածու		4710	4710	9420	9420	9420	14130	14130	14130	18840	18840	18840	18840
101	33691162/21	էստրիոլ		16020	16020	32040	32040	32040	48060	48060	48060	64080	64080	64080	64080
103	33691162/23	պարատ PTH հորմոն		43800	43800	87600	87600	87600	131400	131400	131400	175200	175200	175200	175200

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Կապան, Մ. Ստեփանյան 13
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն Կարեն Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա.Մեժլումյան

/ստորագրություն/
Կ.Տ